ՕՐԵՆՔԸ
ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փաստաբանության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-29-Ն օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1-րդ հոդվածով.

«**Հոդված 15.1. Փաստաբանների պալատի դեպոզիտը**

1. Փաստաբանների պալատն իր որոշած բանկում կարող է ունենալ դեպոզիտ հաշիվ, այդ թվում՝ արտարժույթով:

2. Փաստաբանների պալատի դեպոզիտը (այսուհետ՝ դեպոզիտ) փաստաբանների պալատի կողմից բացված բանկային հաշիվ է, որտեղ մուտքագրվում են շահառուին վճարման ենթակա գումարները: Դեպոզիտ հաշվում (ենթահաշվում) մուտքագրված գումարը ստանալու իրավունքը պատկանում է շահառուին, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի: Փաստաբանների պալատի նախագահը կամ ներկայացուցիչը թույլ է տալիս դեպոզիտ մուտք անել դրամական միջոցներ, եթե դիմողը փաստաբան է կամ հանդես է գալիս փաստաբանի միջոցով:

3. Փաստաբանների պալատի դեպոզիտը կարող է օգտագործվել պարտավորությունների կատարման ապահովման նպատակով: Պարտավորությունների կատարման ապահովման նպատակով փաստաբանների պալատի դեպոզիտը օգտագործելու դեպքում փաստաբանների պալատի և պարտավորության կողմերի միջև կնքվում է փաստաբանական դեպոզիտի պայմանագիր (սույն հոդվածի իմաստով այսուհետ՝ դեպոզիտի պայմանագիր), որով սահմանվում են պարտավորությունների կատարման ապահովման պայմանները և կարգը:

4. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված դեպքերում Փաստաբանների պալատի դեպոզիտ հաշիվների միջոցների տնօրինումն իրականացվում է Փաստաբանների պալատի համաձայնությամբ, դեպոզիտի պայմանագրով նախատեսված կարգով:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 366-րդ հոդվածով նախատեսված դեպքում փաստաբանների պալատի դեպոզիտ գումար հանձնելու հարաբերությունների նկատմամբ տարածվում է «Նոտարիատի մասին» օրենքի՝ դրամական գումարները դեպոզիտ ընդունելու, պահպանելու, հանձնելու և վերադարձնելու հարաբերությունները կարգավորող նորմերը՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:

6. Փաստաբանների պալատի պարտավորություններով Փաստաբանների պալատի դեպոզիտ հաշվին ի օգուտ շահառուների մուտքագրված գումարների նկատմամբ չի կարող բռնագանձում կամ որևէ արգելանքի միջոց կիրառվել:

7. Սույն հոդվածով նախատեսված գործարքների նկատմամբ Փաստաբանների պալատը կարող է իրականացնել նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված միջոցառումներ:

8. Դեպոզիտ հաշվին կարող են գումարներ փոխանցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

9. Դեպոզիտ հաշիվներին մուտքագրված դրամական միջոցների առկա գումարների նկատմամբ հաշվեգրվող տոկոսները համարվում են փաստաբանների պալատի սեփականությունը: Փաստաբանների պալատի խորհուրդը կարող է վճարներ սահմանել քաղաքացիաիրավական գործարքներով դեպոզիտի պայմանագրեր կնքելու համար:

10. Դեպոզիտի միջոցով փաստաբանների պալատի ստացած գումարների երեսուն տոկոսը փաստաբանների պալատը պարտավոր է օգտագործել անվճար իրավաբանական օգնություն կազմակերպելու համար:

11. Սույն հոդվածով նախատեսված փաստաբանների պալատի գործողությունները լիցենզավորման ենթակա չեն:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԵՆՔԸ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-239 քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 366-րդ հոդվածում՝

1) 1-ին և 2-րդ մասերում «նոտարի» բառից հետո լրացնել «կամ փաստաբանների պալատի» բառերով.

2) 3-րդ մասը «Նոտարը» բառից հետո լրացնել «, փաստաբանների պալատը» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ

Նախագծերով նախատեսվում է ներդնել Փաստաբանների պալատի դեպոզիտի ինստիտուտը: Պալատի դեպոզիտ հաշիվն իրենից ներկայացնում է փաստաբանների պալատի կողմից բացված բանկային հաշիվ որտեղ մուտքագրվում են Պալատի անդամ փաստաբանների շահառուին՝ որպես պարտավորության կատարում, վճարման ենթակա գումարները:

Փաստաբանների պալատի դեպոզիտ հաշվի ինստիտուտը լայն տարածում ունի եվրոպական մի շարք փաստաբանական կառույցներում: Օրինակ, Ֆրանսիայում գործում է ԿԱՌՊԱ համակարգը, որի շնորհիվ պարտավորության կողմերի փաստաբանները գործարքի կատարման գումարը մյուս կողմին հանձնելու փոխարեն այն մուտք է անում Պալատի դեպոզիտ հաշվին, որից հետո գործարքի մյուս կողմի պարտավորության կատարման (գույքի հանձնում, ծառայության մատուցում, աշխատանքի կատարում և այլ) դեպքում գումարի հասցեատերը ստանում է գումարը, հակառակ դեպքում գումարը վերադարձվում է վճարողին:

Նախագծով դեպոզիտ հաշվի ներդրումը շահավետ է ոչ միայն պարտավորության կողմերի, այլ նաև Փաստաբանների պալատի համար, քանի որ այդ գումարները բանկային հաշվին մուտքագրվելուց հետո դրանց վրա հաշվեգրվում են տոկոսներ, որոնք թողնվում են Պալատի սեփականությանը: Ընդ որում, Պալատը պարտավորվում է ստացված գումարի երեսուն տոկոսը օգտագործել անվճար իրավաբանական օգնություն կազմակերպելու համար, ինչն էլ կարող է ծառայել որպես անվճար իրավաբանական օգնության տրամադրման այլընտրանքային (ոչ պետական միջոցներով կազմակերպվող) մեխանիզմ:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Փաստաբանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի և «Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

««Փաստաբանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի և «Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: